



# ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



330  
263A-2  
340B.4

№.....

Ա. Էջմիածին Ապրիլ ... 19.6.9թ.

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ա ռ

Ուրախ սրտով կը յիշենք այն սիրոյ ճաշը որ տեղի ունեցաւ անցեալ տարի Ոււալտորփ Ասթորիա հիւրանոցին մէջ, ուր ամերիկահայ մեր հոգևոր զաւակները այնքան մեծ թիւով հաւաքուած էին իրենց Հայրապետին շուրջ, ջերմագին, հարազատ ապրումներով զեղուն:

Ուրախ ենք մանաւանդ որ Ամերիկայի հայ զաղութը, իր ծոցին մէջ ունի Զեզի նման ազգայիններ, որոնք վառ կը պահեն իրենց հոգիներուն մէջ՝ լոյսը հայոց սուրբ հաւատքին և միշտ պատրաստ են օգնելու մեր Եկեղեցւոյ կեն. սունակութեան և պայծառութեան:

Վերոյիշեալ Ծաշկերոյթին առթիւ . . . . դոլլարի 2եր նուիրատու- ութիւնը ի նպաստ Սուրբ Վարդան Տաճարի շինութեան, ծշմարիտ ապացոյց է 2եր Եկեղեցահրութեան:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն, Մեր օրհնութիւնը կը բերենք 2եզի և 2եր ընտանիքի անդամներուն, աղօթքով որ Տէրը զ2եզ առաջնորդէ քարի գործոց յաջողութիւններու, արևշատութեամբ ու երջանկութեամբ:

,,Եւ Աստուած իմ, Լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառօք ի Քրիստոս Յիսուս,, /Փիլիպ. Դ. 19/ ամէն:



*Վահագին  
ԳԱՐԴԱՐԱԿԱՆ ԿԱՐԱՎԱՐ ՀԱՅ ԱԿ*